ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ մանկավարժներ, կրթական ոլորտի հարգարժա՛ն ներկայացուցիչներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Այս մասնագիտության կրողը լինելը առաքելություն է, որը պահանջում է ամենօրյա նվիրում և անձնազոհություն:

Դուք եք, որ ձևավորում եք արժանապատիվ քաղաքացիներ, ձեր աշխատանքի արդյունքում են հոկվում ինքնաճանաչում տանող ճանապարհները: Սիրելի ուսուցիչներ, ձեր ձեռքերում նոր ձևավորվող հասարակությունն է: Դուք կարող եք նրանից ստանալ կիրթ, դաստիարակված և հաղթանակած սերունդ կամ կարող եք վերածել այն մտազուրկ զանգվածի:

Ձեր ձեռքերում է մեր հայրենիքի գալիքը: Լիահույս եմ, որ ձեր կրթած սերունդները գերազանցելու են նախորդներին իրենց մտավոր ուժով ու հոգեկերտվածքով, առավել ամուր են կառչելու իրենց հայրենիքին:

Հարգարժա՛ն մանկավարժներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ, շնորհակալ եմ սերունդների դաստիարակման ու ազգապահպանության գործում ունեցած մեծ ավանդի համար:

Թող ձեր աշակերտները գերազանցեն ձեզ, իսկ ձեր մարդկային և մասնագիտական որակները յուրաքանչյուր օր ավելի ամրանան:

Եղեք առողջ և վայելեք ձեր սաների սերը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան